ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ· ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

ԼՈՒՐԵՐ ՎԱՏԻԿԱՆԻՑ

Հուլիսի 24-ին Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս II-ն ցավակցական հեռագիր է հղել Մարոկկոյի նոր թագավոր Մոհամեդ VI-ին՝ նախորդ օրը, երեկոյան, 70 տարեկան հասակում, նրա հոր՝ Հասսեյն II-ի վախճանման կապակցությամբ: Իր համառոտ ցավակցականի-մեջ Պապն ասել է. «...վերհիշելով Երուսաղեմի հարցով Կասաբլանկա այցելությանս ընթացքին իր հետ ունեցած իմ հանդիպումները, ես մտապահել եմ մի մարդու կերպար, որը ցանկանում էր զարգացնել երկխոսությունը հավատացյալների միջև և նպաստել խաղաղության հաստատմանը՝ հատկապես Միջին Արևելքում»:

Հուլիսի 28-ին տեղի ունեցավ արքեպիսկոպոս Ժան-Լուիս Տյուռանի և ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հանդիպումը: Մեկ ժամից ավել տևող հանդիպման ընթացքում քննարկվել են միջազգային հարաբերություններին առնչվող լայն շրջանակի հարցեր: Մասնավոր ուշադրություն է դարձվել Միջին Արևելքի, ասիական մի շարք երկրների և Բալկանյան հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացին:

Սեպտեմբերի 4-ին Նորին Սրբությունը հովվապետական այցելությամբ մեկնել է Սալեռնոյի թեմ, Իտալիա, որտեղ նախագահել է Ֆաիանո դի Պոնտեսագնանո քաղաքում «Հովհաննես-Պողոս II» անունը կրող թեմական ճեմարանի և «Սուրբ Մատթեոս» հոգևորականաց տան բացման հանդիսավոր արարողությանը, ուր հավաքվել էին շուրջ 10.000 հավատացյալներ:

«Կաթոլիկ հայերի Պատրիարք Հովհաննես-Պետրոս XVII (Գասպարյանը), որը 72 տարեկան է և պատրիարքական գահին է 1982 թվականից, վայր է դրել իր լիազորությունները»,- սեպտեմբերի 8-ին հայտարարել է Սուրբ Աթոռի լրատվական ծառայությունը: Պատրիարք Հովհաննես-Պետրոսը, մայիս ամսին Հռոմում գումարված հայ կաթոլիկների սինոդի որոշումը լսելուց հետո, իր հրաժարականն է ներկայացրել Հովհաննես-Պողոս II Պապին, որը և ընդունել է այն: Նոր Պատրիարքի ընտրությունները կկայանան հոկտեմբերի 2-ին, իսկ մինչ այդ պատրիարքության գործերը վարելու է Մանվել եպիսկոպոս Բատակյանը:

1996 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր Կառլոս եպիսկոպոս Խիմենես Բելոն կոչ է ուղղել միջազգային հանրությանը՝ միջամտելու Արևելյան Թիմորում կատարվող ողբերգությանը: Իտալական «Ավվենիրե» թերթին տված

իր հարցազրույցում եպիսկոպոսն ասել է. «Այսօր, առավել քան երբևէ, մենք ունենք տարածաշրջանում միջազգային խաղարարար զորքերի ներկայության կարիքը»: Նա ավելացրել է նաև, որ Ինդոնեզիայի զինված ուժերը ցանկանում են կրկնել 1975 թ. իրադարձությունները, երբ Ինդոնեզիան բռնի կերպով գրավեց նախկին պորտուգալական այդ գաղութը:

Սեպտեմբերի 12-ին Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս II Պապը Թիմորում խաղաղության վերահաստատման և արյունահեղության դադարեցման կոչ է ուղղել իր ամենշաբաթյա ուղերձում: Սրբազան Քահանայապետը նկատել է, որ նախկին պորտուգալական այդ համայնքում տեղի ունեցող «դաժան բռնությունները» ուղղված են «երկխոսություն և հաշտություն կառուցող» կաթոլիկ եկեղեցու դեմ: «Ես կրկին իմ կոչն եմ ուղղում քաղաքական ու զինվորական առաջնորդներին և ունկնդիր միջազգային հանրությանը՝ լսել խեղճերի ու անօգնականների լացը և անհապաղ օգնության ձեռք մեկնել»,-ասել է նա:

Սեպտեմբերի 17-ին Կարդինալ Սալվատորե դե Ջիորջիի նախագահությամբ կատարվեց Սիցիլիայի քահանա Ջուզեպպե Պուգլիսի սրբացմանը նախորդող կրոնական մի արարողություն: Հանգուցյալ քահանան, որը հայտնի էր աղքատ և կարիքավոր երեխաների հանդեպ իր հոգածությամբ, 1993 թ. սեպտեմբերին սպանվել էր սիցիլիական մաֆիայի կողմից:

«Բաղդադի առաջնորդ Սադամ Հուսեյնը հրահանգել է վերանորոգչական աշխատանքներ սկսել Ուր քաղաքում, որտեղ ծնվել է Աբրահամ նահապետը, ըստ պատշաճի պատրաստելով այն Հռոմի Պապի մոտալուտ այցելությանը»,- տեղեկացրել են իրաքյան թերթերը: Ամենին՝ Իրաքի կառավարությունը մշակույթի, ինչպես նաև կրոնի գործերի և լրատվության նախարարությունների մասնակցությամբ հատուկ հանձնախումբ է ստեղծել, որը զբաղվելու է այցելության նախապատրաստական աշխատանքներով: 2000 թվականի հավանաբար մարտ ամսին կատարելիք այդ ուխտագնացության ճանապարհին Պապն այցելելու է նաև Հորդանանում գտնվող Նեբո սար, որտեղից, Աստվածաշնչի համաձայն, Մովսես մարգարեն մահվանից առաջ նայել է Ավետյաց երկրին: Այցելության մանրամասները քննարկվել են սեպտեմբերի 18-ին Հորդանանի նոր թագավոր Աբդուլլայի և Հռոմի Պապի միջև վերջինիս ամառային «Կասել Գանդալֆո» դղյակում տեղի ունեցած հանդիպման ընթացքում:

Կիրակի օրը, սեպտեմբերի 19-ին, Հովհաննես-Պողոս II-ը իր երկրորդ հովվապետական այցելությամբ մեկնել է Սլովենիայի Հանրապետություն, Մարիբոռ: Օդանավակայանում կատարված ողջույնի կարճ արարողությունից հետո, Պապն անմիջապես մեկնել է Բետնավա ամրոցի մոտ գտնվող բացատ՝ սրբացման հանդիսավոր պատարագը մատուցելու: Այս անգամ Նորին Սրբությունը սրբերի դասն է կարգել եպիսկոպոս Անտոն Մարտին Սլոմսելին, որը մեծ նպաստ է ունեցել սլովենական լեզվի և մշակույթի զարգացման գործում:

Սրբադասմամբ զբաղվող Վատիկանի հատուկ հանձաժողովը որոշում է ընդունել Հովհաննես-Պողոս II Պապին ներկայացնել Հովհաննես XXIII-ին սրբացնելու մասին առաջարկությունը: Իտալական «Իլ Մեսսաջեռո» թերթի

հաղորդած տեղեկությունների համաձայն, 2000 թվականին սպասվում է մեկ այլ Հռոմի Պապի՝ Պիոս IX-ի սրբացումը: Սակայն եթե Հովհաննես XXIII-ի սրբացնելու պարագային ներկայիս Պապը ոչ մի առարկություն չունի, ապա Պիոս IX-ի կապակցությամբ նա ցանկացել է խորհրդակցել իտալացի պատմաբանների և քաղաքագետների հետ՝ խուսափելու համար հետագա բարդություններից: Հիշեցնենք, որ Պիոս IX Պապը որոշ պատմաբանների կողմից մեղադրվում էր Ադոլֆ Հիտլերի հետ կապեր ունենալու մեջ:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի Արդարադատության նախարարը հանդես է եկել «Գիտության Եկեղեցի» կոչվող հաստատության՝ Ֆրանսիայում պաշտոնապես չգրանցելու առաջարկությամբ, որովհետև նա գտնում է, որ վերջինս ավելի աղանդ է, քան թե կրոն: «Գիտության Եկեղեցի»-ն ԱՄՆ-ում գրանցված է իբրև կրոն և մեծ համակրանք է վայելում Հոլիվուդյան կինոաստղերի շրջանակներում: Այսպես, օրինակ, հանրաճանաչ Ջոն Տրավոլտան, Թոմ Կրուզը և Նիքոլ Քիդմանն այս աղանդի հետևորդներ են: Մինչդեռ Գերմանիայում «Գիտության Եկեղեցի»-ն համարվում է նույնիսկ քրեապես հետապնդելի աղանդ, որովհետև իր «պաշտամունքի» ընթացքում թույլատրում է բժշկության անթույլատրելի կիրառություններ և բռնություններ:

ՈՒՂՂԱՓԱՌ ԱՇԽԱՐՀ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս I-ը ողջունել է իր եկեղեցու բոլոր հետևորդներին՝ ծիսական նոր տարվա սկզբի կապակցությամբ: Իր խոսքում Պատրիարքը կարևորել է հոգևոր կյանքի անհրաժեշտությունը յուրաքանչյուր հավատացյալի կյանքում: Անդրադառնալով Հարավսլավիայում և Թուրքիայում երկրորդ հազարամյակի ավարտին պատահած մարդկային ծանր դժբախտություններին, նա ասել է. «Սա հիմնականում այն պատճառով է, որ յուրաքանչյուր մարդու ներքին հոգևոր միջավայրի գիտակցությունը ոչ բարելավվել է, ոչ էլ Աստծո փառքով դարձել դեպի բարին»:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Այս թվականի սեպտեմբերի 6-ին գումարվեց Հունական եկեղեցու Սուրբ Սինոդի ժողովը, որը մասնավորաբար քննարկեց կարդինալ Էդվարդ Իդրիս Կասսիդիի Խրիստոդուլոս արքեպիսկոպոսին ուղղված գրությունը, որտեղ վկայակոչված էր Հռոմի Պապի շրջաբերական նամակն այն մասին, ուր Պապը

2000 թվականին քրիստոնեական մեծագույն սրբատեղիներով կատարելիք իր ուխտագնացության ընթացքում ցանկություն էր հայտնել հանդիպել ուղղափառ առաջնորդների, այդ թվում նաև Խրիստոդուլոս արքեպիսկոպոսի հետ: Ի պատասխան այս գրության, Սուրբ Սինոդն ընդունել է որոշում, որտեղ ասվում է, որ ուղղափառ եկեղեցիների առաջնորդները պետք է հավաքվեն Տիեզերական Պատրիարքի նախաձեռնությամբ գումարված ժողովում, որտեղ և պիտի քննարկեն նախատեսվող հանդիպման մանրամասները:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 10-ին Մոսկվայում գումարվեց Ռուսաստանի Միջկրոնական խորհրդի երկրորդ նիստը, որին մասնակցում էին Մոսկվայի Պատրիարքության արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ միտրոպոլիտ Կիրիլը, Ռուսաստանի Եվրոպական տարածաշրջանի մուսուլմանների հոգևոր իշխանության Գերագույն խորհրդի նախագահ, Ռուսաստանի մուֆտիների խորհրդի նախագահ Ռավիլ Գայնուտդինը, ԱՊՀ-ի և Ռուսաստանի գերագույն ռաբբի Ավռոմ Շայևիրը, Մոսկվայում Պանդիտո Խամբա-լամայի հոգևոր ներկայացուցիչ Սանժեյ-լաման և շատ ուրիշներ: Մասավորաբար քննարկելով Դաղստանում առկա կացությունը, նիստի մասնակիցներն իրենց համոզվածությունն են արտահայտել, որ անհրաժեշտ է ամրապնդել միջկրոնական երկխոսությունն ու համագործակցությունը՝ միևնույն ժամանակ նշելով, որ վերոհիշյալ իրադարձությունները ոչ մի առնչություն չունեն կրոնի հետ:

Սեպտեմբերի 13-ին Պատրիարքարանում գումարվեց Քրիստոնեական միջհարանվանական խորհրդակցական կոմիտեի երրորդ ընդլայնված նիստը, որը նվիրված էր հոբելյանական միջազգային- միջհարանվանական համաժողովի նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը:

Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիյ II-ը սեպտեմբերի 13-ին հանդես է եկել Մոսկվայում և Բույնակսկում կատարված ահաբեկչությունները դատապարտող մի հայտարարությամբ, որտեղ ասվում է. «Այսօր մեր եկեղեցու տաճարներում աղոթք է վերառաքվել Մոսկվայում և Բույնակսկում կատարված հանցագործությունների զոհերի հոգվո խաղաղության համար: Սգո օրը նշանավորվեց նոր սարսափելի ոճրագործությամբ՝ մեկ այլ բնակելի տան պայթեցմամբ, որը տասնյակ անմեղ մարդկանց մահվան պատճառ դարձավ»: «.... մոսկվացիներին անհրաժեշտ է համախմբվել՝ նոր ոճրագործությունները կանխելու համար»,- կոչ է արել Ալեքսիյ Պատրիարքը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Պետրոս VII-ը, լսելով Հունաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի մասին, ցավակցական գրություններ է հղել Հունաստանի Հանրապետության նախագահին, վարչա-

պետին և Հունաստանի Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Խրիստոդուլոս արքեպիսկոպոսին: «Մենք խորապես վշտացած ենք մարդկային զոհերի համար և կիսում ենք Աստծո բոլոր այն զավակների և ընտանիքների ցավն ու վիշտը, որոնք տուժել և վնասվել են այդ աղետից»,- ասվում է գրության մեջ:

ՍԵՐԲԻԱ

Սերբ Ուղղափառ Եկեղեցին վերջերս հրապարակեց պաշտոնական տվյալներ, որոնց համաձայն, միայն հունիսի 2-ից և խաղաղարար զորքերի տեղակայումից մինչև օգոստոսի 22-ը սպանվել են 265 և (մինչև օգոստոսի 30-ը) առևանգվել թվով շուրջ 212 սերբեր: Դարձյալ անարգվում և կործանվում են Կոսովոյի և Մետոհիայի շրջաններում գտնվող քրիստոնեական սրբավայրերը: Այսպես, «Պռովոսլավլե Պրեսս» գործակալության հաղորդած տեղեկությունների համաձայն, սեպտեմբերի 5-ին շուրջ 70 գինվորներ իրենց մարմիններով «կենդանի պատնեշ» են ստեղծել ալբանական ծայրահեղականների դեմ և պաշտպանել՝ իր հնությամբ և մշակութային արժեքներով հռչակված Պեք Պատրիարքության վանքը: Այս կապակցությամբ Սերբական Եկեղեցին իր տառապյալ ժողովրդի հետ միասին շարունակում է բարձրացնել իր արդար բողոքի ձայնը:

ԱԼԲԱՆԻԱ

Ալբանական Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցին, օգնելով Կոսովոյի տուժած մահմեդական բնակչությանը, բարեկամության և հաշտության կամուրջ է անցկացրել հակամարտող այս երկու ժողովուրդների միջև: «Ալբանական Եկեղեցին մեծ դժվարության մեջ էր, երբ սկսեց Կոսովոյի հակամարտությունը,- ասել է Ալբանական Եկեղեցու առաջնորդ, ազգությամբ հույն Անաստասիոս արքեպիսկոպոսը,- որովհետև կոսովոցիները անիծում էին ուղղափառ սերբերին իրենց տառապանքների համար»: Սակայն այս կարճ ժամանակահատվածում Ալբանական Եկեղեցին, միլիոնավոր դոլարների օգնություն բաշխելով կարիքավորներին, կարողացել է գրավել ալբանացիների համակրանքն ու վստահությունը: «Մենք աղքատ, բայց ընկերներով հարուստ Եկեղեցի ենք»,- հայտարարել է Անաստասիոս արքեպիսկոպոսը:

ԿԱԹՈԼԻԿ ԱՇԽԱՐՀ

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յորքի արքեպիսկոպոս Դևիդ Հոպը հուլիսի վերջին այցելեց Ռումինիա: Այցելության հիմնական նպատակը բարեգործական մի քանի ծրագրերին մասնակից լինելն էր: Ինքը՝ Դևիդ Հոպը, Մեծ Բրիտանիայի Քրիստոնյա երեխա-

ների բարեգործական ֆոնդի (CCF) միջոցով մարդասիրական մեծ ծրագրեր է իրականացնում Ռումինիայի կարիքավոր երեխաներին օգնելու համար:

Այս տարի Անգլիկան եկեղեցին մեծ շուքով տոնակատարությունների մի շարք ծրագրեր է անցկացնում՝ նվիրված կանանց ձեռնադրության 25-ամյա հոբելյանին: Իր ելույթում Անգլիկան Համայնքի գլխավոր քարտուղար Ջոն Լ. Պետերսոնն ասել է. «Անգլո-Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիները հյուսիսում և հարավում քայլեր են ձեռնարկել այս ուղղությամբ: Մշակութային առումով տարբեր երկրների եկեղեցիները Միացյալ Նահանգներում, Ուգանդայում, Ճապոնիայում և Հարավային Աֆրիկայում ձեռնադրում են կանանց»:

Սեպտեմբերի 14-ից 25-ը Շոտլանդիայում, Դունդիի Համալսարանում, գումարվեց Անգլիկան խորհրդակցական ժողովի (ACC) հերթական՝ 11-րդ համագումարը: Ժողովի բացմանը, սեպտեմբերի 11-ին, նախորդել էր պատմական Սբ. Անդրեաս Մայր Տաճարում Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջորջ Լ. Քերիի մատուցած Պատարագը, որի ընթացքում քարոզ էր խոսել Շոտլանդական եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ Ռիչարդ Հոլլովեյը: Համագումարին մասնակցել են 125 պատգամավորներ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԴԱՆԻԱ

Դանիական զանգվածային լրատվության միջոցները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ընբոստ քահանա Լեիֆ Բոռկ Հանսենի դատավարության նկատմամբ: Վերջինս 20- օրյա կալանքի էր դատապարտվել այն բանի համար, որ դանիական իշխանություններից թաքցրել էր 29 սերբ փախստականների: Թեև եկեղեցին գտել է, որ քահանան իսկապես զանցանք է գործել և մեղավոր է պետության առջև, սակայն Հանսենը հավաստիացրել է, որ շարունակելու է իր գործը նույնիսկ ի գին իր քահանայության:

Վերջերս Դանիայում անցկացվել են վիճակագրական հարցումներ, որի արդյունքում հայտի է դարձել, որ Դանիայի բնակչության 85,4%-ը, 4.539.857 մարդ, Դանիական Լութերական եկեղեցու հետևորդներ են: Մահմեդական համայնքը հաշվում է 119.000 հոգի: Բացի այդ, Դանիայում կան 34.864 կաթոլիկներ, 15.234 Եհովայի վկաներ, 3.120 հրեաներ, Մկրտչական և երեք այլ եկեղեցիների՝ 5.000 և ավելի քիչ հետևորդներ:

ՇՎԵԴԻԱ

Շվեդական եկեղեցին ամենիջապես արձագանքել և օգնության ձեռք է մեկնել Թուրքիայում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի զոհերին: Շուրջ 1.000.000 շվեդական տարադրամ է փոխանցվել երկրաշարժից տուժածների օգնության հաշվեհամարին: Բացի այդ, Շվեդական եկեղեցու Օգնություն

(ՇԵՕ) կազմակերպությունը Իզմիր քաղաքի մոտ մի ճամբար է հիմնել, որտեղ ժամանակավոր բնակություն են հաստատել ավելի քան 500 ընտանիքներ, որոնց խնամքը նույնպես իր վրա է վերցրել ՇԵՕ-ն :

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՀԽ-ն մեծագույն վշտով է ընդունել Արևելյան Թիմորի Քրիստոնեական եկեղեցու գերագույն քարտուղար Ֆրանսիսկո դե Վասկոնսելոսի սպանության լուրը: Նա սպանվել էր սեպտեմբերի 10-ին ինքնավարությանը կողմնակից ոստիկանության կողմից: Այս առնչությամբ ԵՀԽ-ն, դիմելով միջազգային հանրությանը, մեկ անգամ ևս կոչ է արել ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ արյունահեղությունը կանխելու ուղղությամբ: